# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ




**Մարզկենտրոնը՝**

ք. Գյումրի

***Տարածաշրջանները՝***

Արթիկ
Ախուրյան
Անի
Ամասիա
Աշոցք

**Քաղաքները՝**

Գյումրի
Արթիկ
Մարալիկ

| | |
|---|---|
| Տարածքը | 2 680 քառ.կմ |
| ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը | 9.0 % |
| Համայնքներ, 2019թ.տարեսկզբի դրությամբ | 42 |
| Քաղաքներ | 3 |
| Գյուղեր | 127 |
| Բնակչության թվաքանակը 2019թ. տարեսկզբի դրությամբ | 233.3 հազ.մարդ |
| այդ թվում՝ | |
| քաղաքային | 136.9 հազ. մարդ |
| գյուղական | 96.4 հազ.մարդ |
| ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2018 թ. | 7.9 % |
| Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2018 թ. | 58.7 % |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր | 210 881.8 հա |
| այդ թվում՝ վարելահողեր | 78 151.6 հա |

**ՀՀ Շիրակի մարզը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմուտքում:**

Շիրակի մարզը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմուտքում՝ ք. Գյումրի մարզկենտրոնով:

Պետական սահմանով արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին, արևելքից սահմանակից է Լոռու մարզին և հարավից՝ Արագածոտնի մարզին:

Շիրակի մարզը, լինելով ծովի մակերևույթից մոտ 1 500-2 000 մ բարձրության վրա (մարզի 52 գյուղեր գտնվում են ծովի մակերևութից մոտ 1 500-1 700 մ, իսկ 55-ը՝2 000 մ բարձրության վրա), հանդիսանում է Հայաստանի ամենացրտաշունչ տարածաշրջանը, որտեղ ձմռանը օդի ջերմաստիճանը երբեմն հասնում է -46$^{0}$C-ի:

Մարզի տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոմոբիլային խճուղին: Այստեղ իրար են միանում Հայաստանի և Թուրքիայի երկաթուղային և ավտոճանապարհային ցանցերը:

Սևանա լճից հետո մեծությամբ երկրորդ ջրային ավազանը և մարզի միակ լիճը Արփին է, որն ունի ծովի մակերևույթից ավելի քան 2 000 մ բարձրություն: Լճից սկիզբ է առնում Արաքս գետի ձախակողմյան վտակ Թուրքիայի հետ սահմանային, Ախուրյան գետը:

Ախուրյան գետի վրա գործում է Ախուրյանի ջրամբարը, որն իր 526 մլն. մ$^{3}$ ծավալով խոշորագույնն է հանրապետությունում:

Ախուրյան գետի վրա գործում են 8 ՀԷԿ-ներ: Մարզի տարածքում է գտնվում նաև Մանթաշի ջրամբարը:

Ջավախք-Շիրակ բարձրավանդակի կենսաբազմազանության պահպանման համար մարզում գործում է «Արփի լիճ» ազգային պարկը:

Շիրակի մարզի արդյունաբերության առաջատար ճյուղերն են սննդամթերքի և խմիչքների և ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը: Հայտնի են Արթիկի, Անիի տուֆն ու պեմզան:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրակա-նացվում են ավտոմոբիլային տրանսպորտով (մարզում գործում է օդանավակայան, որն ապահովում է օդային կապ արտաքին աշխարհի հետ):

2018թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատ-վածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 3.6 %,
- գյուղատնտեսություն ՝ 11.0 %,
- շինարարություն՝ 3.7 %,
- մանրածախ առևտուր՝ 4.1 %,
- ծառայություններ՝ 1.6 %:

Մարզկենտրոն Գյումրի քաղաքը (2019թ. տարեսկզբին 113.5 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 118 կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1 550 մ է:

Քաղաքը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին: Այն բնակչության թվաքանակով և իր նշանակությամբ շարունակում է համարվել Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքը:

Գյումրին միշտ եղել է արվեստի և մշակույթի քաղաք: 1912թ. առաջին անգամ Գյումրիում է բեմադրվել Ա.Տիգրանյանի «Անուշ» օպերան և դրվել ազգային օպերային թատրոնի հիմքը, 1935թ. հիմնադրվել է տիկնիկային թատրոնը առաջին մանկական թատրոնը Հայաստանում:

1920թ. հունվարին Գյումրի քաղաքում բացվել է առաջին համալսարանը Հայաստանում:

1988թ. ավերիչ երկրաշարժից 30 տարի անց վերականգնվող Գյումրին շարունակում է մնալ Հայաստանի Հանրապետության մշակութային կարևոր օջախներից մեկը, իսկ «Կումայրի» արգելոց-թանգարանը յուրօրինակ խթան է զբոսաշրջության զարգացման համար:

Քաղաքում զարգացած է մշակող արդյունաբերությունը:

Արթիկ քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 18.0 հազ. բնակիչ, Երևանից 100 կմ հեռավորության վրա) գտնվում է Արագած լեռնազանգվածի հյուսիս-արևմտյան լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 1 760 մ է: Քաղաքով անցնում են Մարալիկ-Գյումրի երկաթգիծը և Ապարան-Գյումրի խճուղին:

Քաղաքի արդյունաբերական արտադրանքի հզորության հենարաններն են սննդի, ապակյա կաղապարների, մեքենաասարքավորանքների և հատուկ նշանակության սարքերի արտադրությունը:

Մարալիկ քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 5.4 հազ. մարդ, Երևանից 90 կմ հեռավորության վրա) գտնվում է Արագած լեռնազանգվածի արևմտյան լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 1 920 մ է: Քաղաքով է անցնում Գյումրի-Թալին-Երևան մայրուղին:

Քաղաքում զարգացած են տեքստիլ արդյունաբերությունը, շինանյութերի արդյունահանումը և գյուղատնտեսությունը:

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ, 2019թ. հունվարի 1-ի դրությամբ

%

տղամարդ -108 570 տարիք կին -124 675




### ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

| | Քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 |
| Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը | 1 092 | 1 247 | 1 196 | 1 207 | 1 207 |
| *այդ թվում՝* | | | | | |
| խանութներ | 674 | 841 | 910 | 939 | 945 |
| կրպակներ | 374 | 329 | 212 | 190 | 182 |
| գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| սպառողական ապրանքների շուկաներ | 5 | 5 | 3 | 3 | 3 |
| առևտրի այլ օբյեկտներ | 37 | 70 | 69 | 73 | 75 |

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 |
| Պետական նախադպրոցական | 51 | 51 | 50 | 101 | 114 |
| Պետական հանրակրթական | 167 | 167 | 165 | 162 | 161 |
| Ոչ պետական հանրակրթական | 4 | 5 | 4 | 5 | 5 |
| Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 28 | 28 | 28 | 27 | 30 |
| Պետական նախնական մասնա-գիտական (արհեստագործական) ուսումնական[1] | 5 | 5 | 5 | 6 | 6 |
| Պետական միջին մասնագիտական ուսումնական | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական | 3 | 3 | 3 | 2 | 2 |
| Պետական բարձրագույն ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| Ոչ պետական բարձրագույն ուսումնական | 1 | 2 | 2 | 2 | 2 |

## ՔԱՂԱՔՆԵՐ

| Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ* |
|---|---|
| Գյումրի | 113 525 |
| Արթիկ | 17 956 |
| Մարալիկ | 5 415 |

## ԳՅՈՒՂԵՐ

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** |
|---|---|---|
| **Ախուրյանի տարածաշրջան** | | |
| 1 | Ազատան | 5 744 |
| 2 | Ախուրիկ | 1 119 |
| 3 | Ախուրյան | 9 370 |
| 4 | Այգաբաց | 767 |
| 5 | Առափի | 1 704 |
| 6 | Արևիկ | 1 805 |
| 7 | Բայանդուր | 719 |
| 8 | Բասեն | 1 299 |
| 9 | Բենիամին | 724 |
| 10 | Գետք | 581 |
| 11 | Երազգավորս | 1 568 |
| 12 | Լեռնուտ | 159 |
| 13 | Կամո | 1 489 |
| 14 | Կապս | 731 |
| 15 | Կառնուտ | 998 |

[1] Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** |
|---|---|---|
| 16 | Կարմրաքար | 43 |
| 17 | Կրաշեն | 263 |
| 18 | Հայկավան | 1 268 |
| 19 | Հացիկ | 997 |
| 20 | Հացիկավան (Մայիսյան կայարան) | 56 |
| 21 | Հովունի | 624 |
| 22 | Հովիտ | 463 |
| 23 | Ղարիբջանյան | 992 |
| 24 | Ախուրյան կայարան | 17 |
| 25 | Մայիսյան | 1 627 |
| 26 | Մարմաշեն | 1 408 |
| 27 | Մեծ Սարիար | 380 |
| 28 | Շիրակ | 1 191 |
| 29 | Ոսկեհասկ | 2 041 |
| 30 | Ջաջուռ | 740 |
| 31 | Ջաջուռավան | 217 |
| 32 | Ջրառատ | 1 095 |
| 33 | Վահրամաբերդ | 1 608 |
| 34 | Փոքրաշեն | 218 |
| 35 | Քեթի | 1 064 |
| Ամասիայի տարածաշրջան | | |
| 1 | Ալվար | 144 |
| 2 | Արավետ | - |
| 3 | Աղվորիկ | 75 |
| 4 | Ամասիա | 1 640 |
| 5 | Արդենիս | 212 |
| 6 | Արեգնադեմ | 423 |
| 7 | Բանդիվան | 228 |
| 8 | Բերդաշեն | 164 |
| 9 | Պաղակն | 61 |
| 10 | Բյուրակն | 631 |
| 11 | Գառնառիճ | 189 |
| 12 | Եղնաջուր | 26 |
| 13 | Գտաշեն | 203 |
| 14 | Կամխուտ | 11 |
| 15 | Զարիշատ | 76 |
| 16 | Երիզակ | - |
| 17 | Ջորակերտ | 171 |
| 18 | Դարիկ | 14 |
| 19 | Ծաղկուտ | 146 |
| 20 | Լորասար | - |
| 21 | Հովտուն | 150 |
| 22 | Մեղրաշատ | 365 |
| 23 | Շաղիկ | 88 |
| 24 | Ողջի | 384 |
| 25 | Ջրաձոր | 253 |
| Աշոցքի տարածաշրջ | | |
| 1 | Աշոցք | 2 819 |
| 2 | Արփենի | 364 |
| 3 | Բաշգյուղ | 56 |

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** |
|---|---|---|
| 4 | Բավրա | 657 |
| 5 | Գոգհովիտ | 423 |
| 6 | Զույգաղբյուր | 516 |
| 7 | Թավշուտ | 373 |
| 8 | Թորոսգյուղ | 363 |
| 9 | Լեռնագյուղ | 24 |
| 10 | Կարմրավան | 224 |
| 11 | Կաքավասար | 129 |
| 12 | Կրասար | 536 |
| 13 | Հարթաշեն | 133 |
| 14 | Հողմիկ[1] | 349 |
| 15 | Ձորաշեն | 220 |
| 16 | Ղազանչի | 635 |
| 17 | Մեծ Սեպասար | 930 |
| 18 | Մուսայելյան | 343 |
| 19 | Սալուտ | 114 |
| 20 | Սարագյուղ | 254 |
| 21 | Սարապատ | 126 |
| 22 | Սիզավետ | 393 |
| 23 | Վարդաղբյուր | 130 |
| 24 | Ցողամարգ | 584 |
| 25 | Փոքր Սարիար | 260 |
| 26 | Փոքր Սեպասար | 210 |
| **Անիի տարածաշրջան** | | |
| 1 | Աղին | 543 |
| 2 | Անիավան | 459 |
| 2 | Անիպեմզա | 428 |
| 4 | Բագրավան | 824 |
| 5 | Նորշեն | - |
| 6 | Գուսանագյուղ | 939 |
| 7 | Իսահակյան | 1 039 |
| 8 | Բարձրաշեն | - |
| 9 | Լանջիկ | 933 |
| 10 | Լուսաղբյուր | 703 |
| 11 | Հայկաձոր | 506 |
| 12 | Ձիթհանքով | 1 424 |
| 13 | Ձորակապ | 1 207 |
| 14 | Շիրակավան | 843 |
| 15 | Ջրափի | 899 |
| 16 | Սառնաղբյուր | 3 498 |
| 17 | Սարակապ | 626 |
| 18 | Քարաբերդ | 1 130 |
| **Արթիկի տարածաշրջան** | | |
| 1 | Անուշավան | 2 125 |
| 2 | Արևշատ | 1 910 |
| 3 | Գեղանիստ | 1 390 |
| 4 | Գետափ | 852 |
| 5 | Լեռնակերտ | 1 413 |

[1] Նախկինում եղել է Ամասիայի տարածաշրջանում ։

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** |
|---|---|---|
| 6 | Լուսակերտ | 699 |
| 7 | Հայկասար | 228 |
| 8 | Հայրենյաց | 775 |
| 9 | Հառիճ | 1 528 |
| 10 | Հոռոմ | 2 069 |
| 11 | Հովտաշեն | 299 |
| 12 | Մեծ Մանթաշ | 2 391 |
| 13 | Մեղրաշեն | 1 245 |
| 14 | Նահապետավան | 851 |
| 15 | Նոր կյանք | 1 558 |
| 16 | Պեմզաշեն | 3 333 |
| 17 | Սարալանջ | 1 295 |
| 18 | Սարատակ | 1 412 |
| 19 | Սպանդարյան | 1 594 |
| 20 | Վարդաքար | 721 |
| 21 | Տուֆաշեն | 426 |
| 22 | Փանիկ | 3 198 |
| 23 | Փոքր Մանթաշ | 3 041 |

[*] ՀՀ քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացված է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ:

[**] ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 955 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2018թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.2%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2018թ.

| | Ընդամենը | *նրանցից՝* | |
|---|---|---|---|
| | | կանայք [1] | տղա-մարդիկ[1] |
| Բնակչությունը, մարդ | 10 000 | 5 334 | 4 666 |
| Ծնվածներ, մարդ | 124 | 58 | 66 |
| Մահացածներ, մարդ | 101 | 50 | 51 |
| Ամուսնություններ | 40 | X | X |
| Ամուսնալուծություններ | 11 | X | X |
| Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ | 31.4 | X | X |
| Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝ | | | |
| նախադպրոցական | 233 | 112 | 121 |
| հանրակրթական | 1 331 | 633 | 698 |
| երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 165 | 106 | 59 |
| նախնական մասնագիտական (արհեստագործական) | 43 | 15 | 28 |
| միջին մասնագիտական | 78 | 39 | 39 |
| բարձրագույն մասնագիտական | 162 | 96 | 66 |
| Առողջապահության ոլորտ՝ | | | |
| հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը) | 39 452 | … | … |
| Մարզիկներ, մարդ | 264 | 48 | 216 |
| Զբաղվածներ, մարդ | 2 966 | 1 458 | 1 508 |
| նրանցից՝ գիտական հիմնարկներում | 3 | 1 | 2 |
| նրանցից՝ գիտության դոկտոր | 0.3 | 0.0 | 0.3 |
| գիտության թեկնածուներ | 1 | 0.5 | 0.5 |
| ուսուցիչներ | 133 | 117 | 16 |
| բժիշկներ | 25 | … | … |
| միջին բուժանձնակազմ | 56 | … | … |
| Գործազուրկներ, մարդ | 879 | 434 | 445 |
| Սոցիալական ապահովության ոլորտ | | | |
| ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ | 1 687 | 1 054 | 633 |
| աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ | 590 | X | X |
| Հաճախումների քանակը տարվա ընթացքում | | | |
| գրադարան | 17 084 | … | … |
| թատրոն | 2 671 | … | … |
| համերգ | 1 029 | … | … |
| թանգարան | 5 599 | … | … |
| Իրավական ոլորտ | | | |
| հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում | 56 | X | X |
| այդ թվում՝ ոչ մեծ ծանրության | 26 | X | X |
| միջին ծանրության | 20 | X | X |
| ծանր | 9 | X | X |
| առանձնապես ծանր | 1 | X | X |

[1] Ցուցանիշները հաշվարկային են: